ՀՈՎՏԱՇԵՆ

Վարչական ղեկավար՝ Սեյրան Փիլոսյան

Հեռ: 094 82 16 08

Մակերես՝ 3.9կմ^2

Բնակչություն՝ 360

Ինդեքս՝ 3015

gayane.poxosyan.70@mail.ru

Հովտաշենը գտնվում է Հայաստանի Շիրակի մարզում, Արթիկ համայնքի վարչական շրջան է, Արթիկից գտնվում է 9,6 կմ հեռավորության վրա, իսկ մարզկենտրոնից 20 կմ հարավ-արևելք, Մանթաշ գետի աջ ափին: Նախկին անվան՝ Ղութնիղշլաղի բառակազմավորման ծագումնաբանական առումով բնորոշիչ տարրն է կազմում <<ղութնի>> բառը, որը յուրահատուկ է Սասնա բարբառին: <<Ղութնի>> բառը նշանակում է <<մետաքս>> միայն Սասնա բարբառում, Արևմտահայաստանի այլ բարբառներում, այդ թվում նաև Կարսին բնորոշ Կարնո (Էրզրումի) բարբառում, հայերեն <<մետաքս>> բառի փոխարեն օգտագործվում են նաև ուրիշ այլալեզու անվանումներ՝ <<խաս>>, <<աբրեշում>>, <<ղումաշ>> (ռուս. - <<ատլաս>>):

Այժմյան Հովտաշեն գյուղը հիմնադրվել է 1829 թ. ռուս-թուրքական պատերազմից հետո Էրզրումի նահանգից, ինչպես նաև Կարսից և շրջակա գյուղերից գաղթած հայերի կողմից:

XIX դարի վերջին քառորդից մինչև 1948 թ.-ը հայտնի է եղել Ղութնիղշլաղ անվամբ։ Գյուղի բնակեցման երկրորդ ալիքը տեղի է ունեցել 1877-1878 թ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ 1877 թ.-ին Բիթլիսի նահանգի Սասուն գավառի Քաղկիկ բերդաքաղաքից (Ծմակ, Սասունի բերդ, Դավթի բերդ) Մելքոն Դիլանյանցի գլխավորությամբ հարյուր սասունցի ընտանիք տեղափոխվել է՝ սկզբից մերձակա Մշո գավառի Խասգյուղ և հետագայում Կարսի մոտակայքում գտնվող Բերնա գյուղ - դեպի ռազմաճակատի գիծ՝ հայազգի ռուս գեներալներ Միքայել Լորիս-Մելիքովի և Արզաս Տեր-Ղուկասովի հրամանատարության ներքո գործող ռուսական բանակին ընդառաջ։ Մելքոն Դիլանյանցը, իր հովանավորության տակ գտնվող Սասունից տեղափոխված հարյուր ընտանիքից հավաքագրելով մեկական տղամարդ, իր ոչ կանոնավոր հարյուրակով մտնում է ռուսական Կուբանի կազակական զորքի Երկրորդ Խոպերյան գնդի կազմի մեջ՝ որպես կազակական միլիցիա ("միլիցիա" են կոչվել կազակներին աջակցող տեղաբնակ կամավորներից կազմված, կազակական զորքին բնորոշ զգեստի, զենքի ու ռազմարվեստի չափանիշներով ղեկավարվող ոչ կանոնավոր հեծելազորային կազմավորումները), ընտանիքների մնացյալ մասը տեղավորելով մարտադաշտերից հեռու գտնվող Շիրակի լեռնային մասում պատսպարված, այժմ Հովտաշեն կոչվող գյուղում։

Պատերազմից հետո Գեորգիյան ասպետ հարյուրապետ Մելքոն Դիլանյանցը Բայազետի և Կարսի ազատագրմանը մասնակցելու համար ստանում է անհատական ազնվականություն և նշանակվում Շիրակի "Ուեզդնի նաչալնիկ" (հայերեն - "գավառի պետ, գավառապետ") պաշտոնին, որի իրավազորության շրջանակը այն ժամանակ միավորում էր շրջանային դատախազի և զինվորական կոմիսարի գործառույթները։ Շիրակում այդ պաշտոնը ժողովրդական լեզվով կոչվել է "գլավնի" (հայերեն - "գլխավոր"), իսկ Սասնա ծագում ունեցող հարյուրապետ Դիլանյանցը ժողովրդի շրջանում հայտնի է դառնում (Յուզբաշի/թուրք.-ից - "հարյուրապետ") Մելքոն" մականունով։ Արմատներով սասունցի Յուզբաշի Մելքոնից է ծագում Արթիկի շրջանում հայտնի Յուզբաշյանների տոհմը։ Յուզբաշի Մելքոնի ժառանգներից է գեներալ-մայոր, արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար, քաղաքական գիտությունների դոկտոր Հայկ Քոթանջյանը։

Գյուղը 1830 թ.-ին հիմնել են Կարսից գաղթածները։ Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, ճակնդեղի, կերային կուլտուրաների մշակությամբ և անասնաբուծությամբ։ Հովտաշենում կան եկեղեցի և XVII դարի Սբ. Մինաս մատուռ։